ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

BookMark

ՕՊԵՐԱՑԻԱ «ՁՈՂ»

BookMark

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Ավետիս Գրիգորյան, Արսեն Բոբոխյան

ՕՊԵՐԱՑԻԱ «ՋՈՊ»

Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը

BookMark

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Գ 888

Գ 888 Գրիգորյան Ավետիս, Բոբոխյան Արսեն
Օպերացիա «Զոդ». Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը/ Ա. Գրիգորյան, Ա. Բոբոխյան.- Եր.: Newmag, 2022.- 404 էջ.- («Մինասյան» մատենաշար):

Ադրբեջանը չի թաքցնում իր տարածքային հավակնությունները Հայաստանի Գեղարքունիքի մարզի սահմանային շրջանների նկատմամբ: Այս աշխատությունը ցույց է տալիս, որ Բաքվի նկրտումները նոր չեն, առնվազն 100 տարվա պատմություն ունեն: 1919 թվականին Սոթքի շրջանի թաթարական բնակչությունն Ադրբեջանի դրդմամբ ապստամբում է Հայաստանի իշխանության դեմ և հայտարարում Ադրբեջանին միանալու մասին: Եվ միայն «Զոդ» օպերացիայի շնորհիվ է այս կարևորագույն շրջանը մնում Հայաստանի կազմում:

«Զոդ» օպերացիան գրեթե անհայտ է լայն հասարակությանը, մինչդեռ այն վերջին հարյուրամյակի մեր պատմության ամենափայլուն էջերից է: Գրքի հեղինակներն առաջին անգամ և նոր փաստական տվյալների հիման վրա ներկայացնում են Սևանա լճի տարածաշրջանում հայ-թաթարական բախումների պատճառները, ժամանակագրությունը, հետևանքները:

Համակողմանիորեն քննարկելով Վարդենիսի հերոսական ինքնապաշտպանության և «Զոդ» օպերացիայի ռազմաքաղաքական ու պատմամշակութային նշանակությունը՝ հեղինակներն իրականացրել են միջգիտակարգային հետազոտություն, օգտագործել ոչ միայն պատմական-արխիվային, այլև ինագիտական ու բանագիտական տվյալներ: Նրանք հատուկ այս գրքի համար ինագիտական պեղումներ են իրականացրել Գեղարքունիքի մարզում, հավաքել են ականատեսների ու նրանց ժառանգների վկայությունները և այդ դեպքերին առնչվող ժողովրդական երգերը:

Գրքի հարցադրումները չափազանց արդիական են հենց այսօր: Այդ պատճառով գիրքը նախատեսված է ոչ միայն նեղ մասնագիտական, այլև քաղաքականությամբ, պատմությամբ ու մշակույթով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-884-47-9
Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Ինագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդը:

Ավետիս Գրիգորյան, Արսեն Բոբոխյան, Օպերացիա «Զոդ». ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը, © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամին:

ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գիրքը հրատարակվել է «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի «Վերաիմաստավորելով 20-րդ դարի հայոց պատմությունը» պատմագիտական դրամաշնորհով:

«Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամը ստեղծվել է 2018 թվականի փետրվարին՝ անվանի ճարտարապետ, պետական և հասարակական գործիչ Գրիգոր Հասրաթյանի և անվանի գիտնական, քաղաքագետ, պետական գործիչ Միքայել Մինասյանի հիշատակին:

Հիմնադրամի «Մինասյան» մատենաշարն աջակցում է պատմագիտական, հետազոտական նախագծերին, որոնք հնարավորություն են տալիս վերաիմաստավորել 20-րդ դարի Հայաստանի պատմությունը:

BOOKLAND

Բովանդակություն

Ներածություն 13

Մաս I Սոթքյան հանգույցի կարևորությունը 21

Գլուխ 1 Սոթքի վարչական սահմանները որոշվում են աշխարհագրորեն 23

Գլուխ 2 Ուշկիանիից մինչև Գեղարքունիք. Սոթքը՝ քարտեզներում ու բաժանումներում 29

Գլուխ 3 Սոթքը հայաթափվեց, բայց դարձավ մարդաշատ 41

Մաս II Հակամարտությունը Սոթքում 53

Գլուխ 4 Ոսկին ու արոտավայրը՝ հակամարտության և համակեցության պատճառ հնագույն շրջանում 55

Գլուխ 5 Միջնադարյան սիրավեպ-էպոսները նվաճողների մասին 63

Գլուխ 6 Նոր ժամանակներ, նոր հակամարտություններ. հայ-մահմեդական բախումները 73

Մաս III «Զոդ» օպերացիան 89

Գլուխ 7 Սիլիկյան եղբայրներն ու «զոդյան դավադրությունը» 91

Գլուխ 8 «Զոդ» օպերացիան և հայ-թաթարական լարվածության հանգուցալուծումը 133

BookMark

Գլուխ 9 Լրտեսական ցանցը Երևանում և ադրբեջանական ռևանշի փորձը ... 145
Գլուխ 10 «Հայկական նավատորմիղի» ստեղծումը ... 159
Գլուխ 11 Ադրբեջանական տեսակետը ... 165

Մաս IV «Զոդ» օպերացիան մեր օրերում. ինչ և ում են հիշում ... 173
Գլուխ 12 «Զոդ» օպերացիան բանավոր զրույցներում և հուշապատումներում ... 175

Մաս V «Զոդ» օպերացիայի հնագիտական ապացույցները ... 219
Գլուխ 13 Որտեղ է Սիլիկյան եղբայրների գերեզմանը ... 221

Վերջաբան ... 229
Երախտագիտության խոսք ... 239

Ծանոթագրություններ ... 241
Աղբյուրների և գրականության ցանկ ... 275
Արխիվային փաստաթղթերի ցանկ ... 297
Նկարների աղբյուրներ ... 341
Տեղանունների նույնականացման ցանկ ... 347
Տեղանունների, անձնանունների և առարկաների ցանկ ... 355

BookMark

«Սեւանը բխում է հեռից, հսկայական մի խորքից, այնտեղ լեռ-
ների տակ պառկած դասաւոր շերտերի տակից, իբրեւ մեծդի
այս աշխարհի անզուսպ մի բացուածք, լոյսը տենչող մի գաղտնի
ուժ եւ մթին մի կեանքի դէպի արեւ բացուած մի պատուհան:

Հայաստանի որոշ վայրերը ու մանաւանդ Սեւանը հասկանալու
համար պէտք է գտնել խորհուրդների բանալին:

Հայաստանի բանալին թաքնուած է հազար շերտերի տակ,
բայց ով որ գտնի՝ կարող է բոլոր դռները բանալ: Արեւմուտքի եւ
Արեւելքի: Այստեղ է բանալին ամենայն բանի:

Սեւանը մօտ է բոլոր աշխարհներին, որովհետեւ նա բարձրա-
բարձր հոգեկան կայան է, որտեղ կուտակւում են հիւսիսից եւ
հարաւից, վերից եւ վարից եկող բոլոր հոսանքները, եւ որտեղից
աննշմարելի հոգեկան հոսանքներ են անցնում դէպի աշխար-
հիս ճակատագիրը կանոնաւորող վայրերը»:

Կոստան Զարեան, «Անցորդը եւ իր ճամբան»

BookNook

Ներածություն

Այս գրքում առաջին անգամ ներկայացնելու ենք ակադեմիական շրջանակներին ու հասարակությանը քիչ հայտնի՝ 1919 թվականի «Զոդ» օպերացիան: Առաջին Հանրապետության գոյության՝ տնտեսական և ռազմաքաղաքական առումներով ծանր ժամանակաշրջանում Թուրքիան և Ադրբեջանը ռազմական ագրեսիային զուգահեռ իրականացնում էին Հայաստանը ներսից քայքայելու ծրագիր՝ որպես գործիք կիրառելով թյուրքախոս բնակչությամբ ստվար բնակեցված շրջանները: Այդ բնակչությունը հիմնականում կենտրոնացած էր սահմանամերձ գոտիներում և դարձել էր յուրահատուկ պայթուցիկ լիցքերի կրողը:

Հակապետական շարժումների կենտրոններից մեկը Նոր Բայազետի գավառի Բասարգեչարի* շրջանն էր՝ այժմյան ՀՀ Գեղարքունիքի մարզի հարավարևելյան հատվածը: Թուրք-թաթարական խռովությունները զանգվածային դարձան 1918-ի սկզբին, Արևելյան Հայաստան թուրքական արշավանքին զուգահեռ: Չանսալով Հայաստանի իշխանության բազմաթիվ հորդորներին՝ շրջանի թուրքաբնակ գյուղերն անցան զինված ապստամբության՝ հարձակվելով սակավաթիվ հայկական բնակավայրերի վրա:

* «Բասարգեչար» անունը ծագում է թուրքերեն «բասար» (հարձակվել, տրորել) և «գեչար» (անցնել) բառերից: Միջնադարյան հայկական աղբյուրներում այն հիշատակվում է որպես Վասակաշեն գյուղ Սյունյաց աշխարհի Սոթք գավառում: (Ծանոթագրությունները՝ հեղինակների):

Բախումներն ուղեկցվում էին խաղաղ բնակչության սպանություններով, մարդկանց ունեզրկումով: Շրջանը փաստացի դուրս եկավ պետական վերահսկողությունից, հաստատվեց անիշխանություն: Ապստամբության կենտրոն դարձնելով Զոդ գյուղը՝ մուսուլման առաջնորդները տարածաշրջանը հայտարարեցին Ադրբեջանի մաս: Այս գրքում կպատմենք Բասարգեչարի «40 օրվա» հերոսական կռիվների, Սիլիկյան եղբայրների դեմ հրեշավոր դավադրության և Հայաստանի Առաջին Հանրապետության ոստիկանական ամենամեծ օպերացիայի մասին:

Այս գիրքը բացառիկ է, որովհետև մինչև այսօր ոչ հայկական, ոչ ադրբեջանական պատմագիտությունն այս թեմային առանձին չի անդրադարձել: Պատմաբան Համլետ Հարությունյանը[1] ժամանակին գրել է «Զոդ» օպերացիայի մասին, բայց հպանցիկ և ներկայացնելով որպես Սևանի ավազանի 19-20-րդ դարերի պատմության մի մաս: Պատմաբան Վանիկ Վիրաբյանը[2] «Զոդ» օպերացիայի մասին խոսել է ՀՀ զինված ուժերի ու հատուկ ծառայությունների պատմության համատեքստում: Ազգագրագետ Ռոզա Գրիգորյանը «Զոդ» օպերացիան հիշատակում է բանասացների պատմություններում և երգերում[3]:

Ադրբեջանցի պատմաբանների աշխատանքը կառուցված է գլխավորապես բանավոր հիշողությունների վրա: Այդ է պատճառը, որ դրանք ունեն բազմաթիվ փաստական անճշտություններ և ցածր հավաստիություն. ընդամենը հակիրճ անդրադարձ են և աչքի են ընկնում փաստերի միակողմանի մեկնություններով[4]:

Մինչդեռ մեր ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են «Զոդ» օպերացիայի, Սոթքի տարածաշրջանում հայ-

թաթարական բախումների և զոդյան դավադրության մանրամասների նոր, փաստական տվյալներ: Օգտագործել ենք ոչ միայն պատմական, այլև բանագիտական ու հնագիտական սկզբնաղբյուրներ, ստեղծել փաստական տվյալների շտեմարան: Վերակազմել ենք մարտական գործողությունների աշխարհագրությունը, փաստագրել և քարտեզագրել բախումների վայրերն ու զորքերի տեղաշարժերի ուղղությունները:

Այս ուսումնասիրության շրջանակում պեղումներ ենք կատարել Սոթք գյուղի կենտրոնում գտնվող «Տիգրանաբերդ» բլրի վրա (մասնագիտական գրականության մեջ հայտնի է Սոթք 1 անունով), որտեղ պահպանվել են վաղմիջնադարյան ամրոցի և միջնադարյան հայկական գերեզմանատան հետքեր: Պեղումներով բացվել է եղբայրական գերեզման: Մեր նախնական ենթադրությամբ՝ այստեղ են թաղված «Զոդյան դավադրության» ժամանակ սպանված հայ հերոսները:

Այս հետազոտությունը պատմագիտության, ռազմական և ֆորենսիկ հնագիտության սահմանագծին է: Ռազմական հնագիտությանը բնորոշ է վերջին 200 տարվա պատերազմական գործողությունների հետազոտությունը, ֆորենսիկ հնագիտությանը՝ զանգվածային թաղումների ուսումնասիրությունը[5]:

Գրքի աշխատանքային նախնական վերնագիրն էր «Զուռնա և դհոլ»: Մինչև «Զոդ» օպերացիայի հանգուցալուծումը ՀՀ զինված ուժերը զուռնա-դհոլի նվագակցությամբ էին մոտենում թուրքական բնակավայրերին՝ խաղաղություն առաջարկելով, և գնդակոծվելուց հետո միայն պատասխանում էին կրակով: Հայկական բանակը երաժշտությունն առաջարկում էր որպես հակամարտության լուծման ձև: